այնմիկ՝ ջնջեցաւ ընդ նոսին և սա, այլ միայն վասն Տաճարին խմացեալ լինի, և ոչ վասն լերին Զիթենեաց, զի նորոգութիւն նորին սեփհական է Հայոց և այլք չունին իրաւունս։

Հաֆիզ Բաշիտ Էֆէնտի. Լուաք զբանս երկուց կողմանց, հայեցեալ 'ի պատմութիւնս Հայոց, երեւի թէ նորոգութիւն Զիթենեաց լերին ըստ մտաց հրովարտակին որ ՀԱ թուին, հրամանաւ Դատաւորին և Շէրիի Օրինաց, և արձանագրութիւն նորին ոչ է ջնջեալ, այլ երկրորդին, եւ այն 'ի պատճառս պարունակութեան նորոգութեան Տաճարին Ս. Յարութեան. իսկ Յոյնք պնդեն թէ առաջին հրովարտակն եւս ջնջեալ համարի, զի երկրորդն 'ի վերայ նորա հիմնեալ է. աստի ծագեցաւ անհամաձայնութիւն, զի մին պնդէ թէ ոչ է ջնջեալ, և միւսն զնորին հակառակն։ Եւ 'ի հրովարտակս Յունաց յիշեալ է թէ ՀԱ—ՀԲ թուականաւ Հայոց տուեալ երից հրովարտակաց արձանագրութիւնքն ջնջեալ են. յայս հայեցեալ երկոքին հրովարտակքս այսոքիկ ջնջեալ համարին եւ Փոխանորդք հակառակութեամբ զմին թողուն և զմիւսն ջնջեն, և յանհամաձայնութենէ նոցին խնդիրն եղեւ անխմանալի, ուստի հարկ է բացատրել։

Փոխանորդն Հայոց. Այսոքիկ են ջնջեալ հրովարտակքն 'ի թուին ՀԱ Ըէպիլ ախբր, սակս նորոգութեան Տաճարին Ս. Յարութեան. ՀԱ Ըէպիլ ախբր, սակս նորոգութեան եկեղեցւոյն Բեթղեհէմի. ՀԲ Սէֆէր, սակս նորոգութեան Զիթենեաց լերին. ՀԱ թուականի հրովարտակին նորոգութիւնն (թէճմիտ) ճառէ զընդհանուր նորոգութենէ Սուրբ Յարութեան։ Առաջին հրովարտակն սակս նորոգութեան Զիթենեաց լերին՝ ոչ է ջնջեալ, և այս բացայայտ երեւի 'ի հրովարտակն Յունաց. «Թէպէտ ջնջեցան երեքին հրովարտակքն Հայոց, այլ յարգեսցին հրովարտակք և հրամանագիրք, որք են 'ի ձեռս երկուց ազգաց»։

Յայտանէ նորոգեալ համարին գրեանք մեր՝ զոր ունիմք վասն նոյն տեղւոյ, և մատուցանեմք զայնս՝ զի ընթերցեալ ծանիջիք զոյջամիտ պատմութիւնս մեր. 'ի թուին Հիճրէթի՝ ՀՂԴ, ՌՀԲ, ՌՀԳ, ՌՀԱ, ընդ ամենայն հրովարտակք Դ։ Եթէ ունին Յոյնք թուղթս ինչ՝ մատուս-